ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«30» նոյեմբերի 2021թ. ՆՄՈ/584/2021

Ք. Արմավիր

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2021 թվականի նոյեմբերի 24-ի ՆՄՈ/580-2021 որոշումը, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ջանֆիդայի համայնքապետարանում հանձնման-ընդունման աշխատանքները կազմակերպելու նպատակով.

որոշում եմ՝

1. Ստեղծել աշխատանքային խումբ՝ համաձայն հավելվածի:
2. Աշխատանքային խմբի ղեկավարին (Ա.Մուրադյան)՝ սույն որոշմամբ նախատեսված աշխատանքներն իրականացնել 3 աշխատանքային օրյա ժամկետում և արդյունքների մասին զեկուցել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետին:
3. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի քարտուղարության վարչատնտեսական բաժնի պետին (Ա. Համբարձումյան)՝ սույն որոշմամբ նախատեսված աշխատանքների կազմակերպման համար տրամադրել ծառայողական հերթապահ ավտոմեքենա:
4. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետին (Վ. Մկրտչյան)՝ սահմանված կարգով իրականացնել գործուղման ծախսերի վճարումը:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ **Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

Недействительная подпись

X

VERIFIED OCSP 30.11.2021 20:27:14 GMT+4

Подписано: HOVHANNISYAN EDVARD 2001830505

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզպետի
2021 թվականի նոյեմբերի 30 -ի
ՆՄՈ/584-2021 որոշման

Կազմ
աշխատանքային խմբի

Աշխատանքային խմբի ղեկավար՝

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի իրավաբանական բաժնի ավագ մասնագետի պաշտոնակատար՝ Անժելա Մուրադյան.

Աշխատանքային խմբի անդամներ՝

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի քաղաքաշինության վարչության գլխավոր ճարտարագետ-շինարար՝ Գասպար Հովհաննիսյան.

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի հողաշինության և հողօգտագործման բաժին-մարզային հողային պետական տեսչության ավագ մասնագետ՝ Սեդա Չալյան.

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի ավագ մասնագետ՝ Սուրեն Սաֆարյան.

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի ՏԻ և ՀԾ հարցերով վարչության ՏԻ և համայնքային ծառայության հարցերի բաժնի մասնագետ Նարեկ Ղուկասյան.

Հանձնող՝
Ջանֆիդա համայնքի ղեկավարի նախկին պաշտոնակատար՝ Վ. Հովհաննիսյան.

Ընդունող՝
Ջանֆիդա համայնքի ղեկավարի նոր պաշտոնակատար՝ Կ. Ղորղանյան:

Գլխավոր քարտուղար՝ ***Ա. Հովհաննիսյան***

Недействительная подпись

VERIFIED OCSP 30.11.2021 19:35:23 GMT+4

Подписано: HOVHANNISYAN ARAM 3812640023